

*ԲԱՅՐԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ Ն.*

*Եզիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ,  
«Յուսաբեր» մշակութային ընկերակցության ատենապետ*

**ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳԻՐԸ  
«ԱՐՄԱԻԵՆԻ»-Ի 150-ԱՄԵԱԿԸ  
(1865 - 2015)**

Բանալի բառեր՝ պատմություն, տպագրություն, հայ մամուլ, Եզիպտոս  
**Keywords.** History, Printing, Armenian Periodicals, Egypt

Հայ ժողովուրդի բազմադարեան պատմութիւնն իր գրական մշակոյթով եւ տպագրութեան արուեստի պատուաբեր վաստակով կարեւորագոյն ազդակներէն մէկը եղած է անոր գոյապայքարին եւ համամարդկային յառաջդիմութեան տարեգրութեան մէջ ունեցած ներդրումին:

Հայ գրական եւ տպագրական մշակոյթը աստանդական պայմաններու տակ թէւ ծնունդ առած է հայրենի բնօրրանէն հեռու վայրերու մէջ, սակայն անոր պաշտպան նուիրեալներու անմնացորդ զոհողութիւններուն արգասիքը եղած է հայ մամուլի եւ տպագրութեան արժանապատիւ ներկայութիւնը համաշխարհային գրականութեան եւ գիտութեան լուսաւորութեան եւ պայծառացումին մէջ:

Այսպէս, եթէ նկատի ունենանք, թէ մամուլի պատմութեան առջինեկի պատիւը կ'երթայ Իտալիոյ Ֆլորէնս քաղաքին մէջ «Նոթիցիէս Սքրիթթի» (Լրատու Գրուածք) անունով 1563-ին լոյս տեսած առաջին լրագրին, եւ այս՝ Կիւթենպերկի 1440-ի տպագրութեան հնարքէն 123 տարիներ ետք<sup>1</sup>:

Ասդին, **հայ առաջին պարբերականը «Ազդարար»**՝ Յարութիւն Քահանայ Շմաւոնեանի (1750-1824) նախաձեռնութեամբ լոյս տեսած է Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ 1794-ին, հայ տպագրութեան նահապետ Յակոբ Մեղապարտի Վենետիկի համեստ տպարանէն 1512-ին ծնունդ առած «Ուրբաթագիրք»էն 282 տարիներ ետք:

Յիշարժան է, թէ տպապատմութեան մէջ Հայ ազգը 13-րդը հանդիսացած

<sup>1</sup> Տե՛ր Խաչատուրեան Արտաշէս: Հայ Մամուլի Մատենագիտական Գործեր, Պէյրութ, 2014, էջ 20:

է համաշխարհային մակարդակով եւ երկրորդը ներկայացած՝ Արեւելքի երկիրներուն միջեւ, իսկ Մամուլի առաջնահերթութեան մէջ՝ 10-րդ պատուաբեր կարգով:

Եգիպտահայ մամուլն ու տպագրութիւնը իրենց հերթին յառաջապահներէն կը հանդիսանան հայ մամուլի եւ տպագրութեան տարեգրութեան մէջ, եթէ նկատի առնուին շրջապատի այն դժուարին պայմաններն ու իրադրութիւնները, որոնք հայ մտաւորականութեան եւ հասարակական գործիչներու կողմէ դիմակալուեցան իրենց ինքնութիւնը պաշտպանելու մաքառումին ընթացքին:

Եգիպտոսի մէջ տպագրական արուեստի եւ մամուլի հրատարակութեան տեղական նախաձեռնութիւնները սկիզբ առած են Նաբոլիոնի ֆրանսական արշաւախումբին (1798-1801) հետ բերուած տպագրական կազմածներու միջոցով: Այսպէս, 1798-ի Օգոստոս 28-ին եւ Հոկտեմբեր 1-ին յաջորդաբար հրատարակուած են ընթացիկ լուրերու «Լը Քուրիէ Տը Լ'Էժիպտ» (Եգիպտոսի Լրատու) եւ գիտական բնոյթի «Լա Տէքատ Էժիպսիէն» (Եգիպտական Տասնօրեայ) երկու ֆրանսերէն լրագրերը, իսկ 26 Նոյեմբեր 1800-ին՝ արաբերէն «Էլ Թէնպի» (Ազդարարութիւնը) մամուլի հրատարակութիւնը, որոնք դադրած են արշաւախումբին Եգիպտոսէն մեկնումով<sup>2</sup>:

Ժամանակակից Եգիպտոսի հիմնադիր Մոհամէտ Ալի Փաշայի (1805-1849) լուսամիտ քաղաքականութեան ընդառաջ՝ Երոպա ուսումնառութեան դրկուած քառասնեակ մը երիտասարդներու վերադարձին եւ անոնց յանձնառութիւններուն յաջող արդիւնքներէն եղան Եգիպտոսի մէջ քաղաքական, մշակութային, գիտական եւ զինուորական մարզերու մէջ արձանագրուած յառաջադիմութիւնները:

Այսպէս, Գահիրէի Պուլաք թաղաշրջանին մէջ, 1821-ին հաստատուեցաւ եգիպտական առաջին եւ կառավարական «Էլ Էմիրէյա» (Իշխանական) տպարանը, իսկ մամուլի ճամբով՝ յաջորդաբար 1827-ի կէսերուն լոյս տեսան «Կուրնալ Էլ Խտէուի» (Խտիվին Լրագիրը) եւ 3 Դեկտեմբեր 1828-ին՝ պետական պաշտօնաթերթ «Էլ Ուաքաէ Էլ Մասրէյա» (Եգիպտական Անցուդարձերը)

<sup>2</sup> Դոկտ. Իպրահիմ Ապտո: *Տպագրութեան եւ Լրագրութեան Պատմութիւնը Եգիպտոսի Մէջ: Ա. Տպագր., Գահիրէ, 1949:*




Տարեկան գին՝ Եգիպտոսի համար կես եգիպտական լիռայ  
(50 դուրուշ ողջ դրամ) կանխիկ վճարելի

Էջերու թիւը՝ 4 էջ, իւրաքանչիւրը՝ երեք սիւնակ

Չափեր՝ 31 X 47 սմ.

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի անուանագիրը առաջին թիւին մէջ մանր եւ պարզ, իսկ յաջորդական երեք թիւերով՝ խոշոր եւ գեղագիր տառերով ներկայացած է:

Նաեւ նկատառելի է ենթախորագրին բնոյթի բաժնին մէջ կատարուած շարքին փոփոխութիւնը «Ազգային, Քաղաքական եւ Բանասիրական» (թիւ 2, 3 եւ 4) փոխան՝ «Քաղաքական, Ազգային եւ Բանասիրական» ի (թիւ 1):



Լ Ր Ա Գ Ի Բ Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա.Զ.Գ.ՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անուանագիրին մասին հետեւեալը դիտել կուտայ Աբրահամ Մուրատեան «Առաջնորդող» իր գրութեան Յ. Գ. Յաւելուածով.

«Յ. Գ.- Լրագրոյս անունը մեծ տառերով գրուած ու փորագրիչին յանձնուած էր թեպէտ ըստ ժամանակին, այլ մինչեւ ցարդ տակաւին փորագրութիւնն աւարտած չըլլալով՝ այդ պատճառին համար աւելի ուշացնել չուզեցինք լրագրոյս հրատարակութիւնը, և այս անգամ այդ մանր գրերով դրինք անունն իր ճակատը. ուստի կլինդրենք մեր Արգոյ Ընթերցողներէն, որ այս անգամ ներողամիտ ըլլան լրագրոյս արտաքին մէկ տգեղութեանը և մեր պիտի ջանամք յաջորդ թիւն աւելի վայելչատես ներկայացնել իրենց»<sup>4</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»ի հրատարակութիւնը **առաջարկութեամբը** կատարուած է եգիպտահայոց Առաջնորդական Փոխանորդ Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս Քէֆսիզեանի (ապագայ Կաթողիկոսը Սիսի – 1871-1894):

<sup>4</sup> Մուրատեան Ա., Արմաւենի. Ա .տարի, Գահիրէ, 1865, թ.1, էջ Ա.:

Սրբազան Հօր մամուլի հանդէպ ցուցաբերած ուշադրութեանը անդրադարձած է Կ. Պոլսոյ եւ Իզմիրի մամուլը, լրագրին լոյս ընծայման ժամանակաշրջանին.

« Գոհութեամբ կ'իմանանք, թէ Նորին Սրբազնութիւնը ջանք ի գործ կը դնէ քաղաքին մէջ տպարան մը հաստատելու եւ կիսամսեայ լրագիր մը հրատարակել տալու համար: Անտարակոյս եմք, որ գերապատիւ Փոխանորդին այս բարի ջանքն յաջողութեամբ կը պսակուի, որովհետեւ - կարծեմք չեմք սխալիր-այնպիսի քաղաքի մը մէջ կը գտնուի, ուր թէեւ փոքրիկ բայց պատուաւոր խումբ մը կայ ժողովրդեան որ ձեռնհաս է յառաջդիմութեան օգնող ամէն խորհուրդ ի գործ բերել, եթէ կամի»<sup>5</sup>:

Նաեւ՝ «...այս լրագրոյն հիմնադրութիւնը Եգիպտոսի առաջնորդական փոխանորդ Գեր. Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոսին ազգասիրական ջանից ու յորդորանաց արդիւքն է ... »<sup>6</sup>:

Իսկ, լրագրին տնօրէն Յովսէփ Էֆենտի Մանուկեանն իր «Յայտարարութեան» մէջ կը հաստատէ.

«...առաջնորդական փոխանորդ Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոսին առաջարկութեամբը հիմնեալ եւ մեր տնօրէնութեանը յանձնեալ լրագիրը՝ կփ ափաքիմք ի բոլոր սրտէ՝ որ խաղաղութեան ու արդարութեան գործիք մը ըլլայ...»<sup>7</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի հրատարակութեան համար Նուպար Փաշայ Նուպարեանի կատարած **թելադրանքին** մասին հետեւեալ հաւանականութիւնը կ'եզրակացնէ Յովհաննէս Թոփուզեան.

«Նուպար Փաշայի կատարած դերին մասին ոչ մի յիշատակութիւն չկայ մեզ յայտնի աղբիւրներում...», սակայն «... նա գործել է ոչ թէ սեփական նախաձեռնութեամբ, այլ Քէֆսիզեանի եւ նրա շուրջը համախմբուած այն մեծատունների խորհրդով, որոնք հույսեր էին կապում «Փարիզ»-ի խմբագրի՝ Աբրահամ Մուրատեանի հրապարակախօսական տաղանդի հետ: Եգիպտոսի պետական ականաւոր հայ գործիչը միաժամանակ հայկական գաղութի մյուսեւելլին կամ ազգապետն էր, եւ բաւական աշխոյժ մասնակցութիւն էր բերում մեծատունների հակասահմանադրական պայքարին: Նա հաւանաբար միջնորդել է, որպէսզի եգիպտական իշխանութիւններն արտօնէն «Արմաւենի» լրագրի հրատարակութիւնը»<sup>8</sup>:

<sup>5</sup> Կիլիկիա, Կ. Պոլիս, 1864, 28 նոյեմբերի:

<sup>6</sup> Արշալոյս Արարատեան, Իզմիր, 1865, 17 Ապրիլի:

<sup>7</sup> Մանուկեան Յովսէփ: Յայտարարութիւն, Արմաւենի, Գահիրէ, 1865, թ.1, էջ Ա:

<sup>8</sup> Թոփուզեան Յովհ.Խ. Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն, Երեւան, 1978, էջ 316-317:

Նկատի կարելի է առնել, թե լրագրին խմբագիր Աբրահամ Մուրատեան Գահիրե հաստատուել է Խորենեան վարժարանի տեսուչ նշանակուել է տք. «... իր գործունեությունը զինքը համակրելի կը դարձնէ Նուպար Փաշային, որ կը թելադրէ իրեն, որ թերթ մը հրատարակէ»<sup>9</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **տնօրէնութեան** յանձնառությունը, որ կատարուած է Ազգային Խորենեան Վարժարանի հոգաբարձութեան եւ **արտօնատիրությունը** ստանձնած անոր ատենապետ Յովսէփ Էֆենտի Մանուկեանի կողմէ, այս մասին հետեւեալը նշուած է Վահան Չարդարեանի եգիպտահայ լրագրութեան վաթսունամեակին նուիրուած յօդուածին եւ լրագրին առաջին թիւով լոյս տեսած Յովսէփ Մանուկեանի «Յայտարարութեան» մէջ.

«Թերթին պաշտօնական արտօնությունը կ'ստանայ Յովսէփ Մանուկեան, որ իր "Յայտարարություն"ին մէջ կ'ըսէ. « Ուրեմն թող նոր թուական մը սկսի մեզի համար, թող մեր հայրենակիցք նպաստեն իրենց քաջալերութեամբ գործոցս յառաջդիմութեանը ... Միմիայն այս պայմաններով է, որ Դպրոցին Հոգաբարձութիւնն իր վերայ առաւ լրագրոյս տնօրէնությունը ... »<sup>10</sup>:

Նաեւ Յովհ. Թովուզեան կ'աւելցնէ. «... Արտոնագիրը ստացուել է Խորենեան դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Յովսէփ Մանուկեանի անունով, եւ նրան էլ վերապահուած էր լրագրի համարները ստորագրելու իրաւունքը»<sup>11</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի հրատարակիչներուն կողմէ անոր **խմբագրությունը** Աբրահամ Մուրատեանի յանձնելու որոշումին եւ ընդունուելուն մասին անդրադարձած են բոլոր այն մատենագիր եւ ներհուն մտաւորականները, որոնք թերթին պատմութեան շուրջ կատարած են ուսումնասիրական իրենց երախտաշատ աշխատանքները:

Մատնանշելի է թերթին անդրանիկ թիւով կատարուած «Յայտարարութեան» մէջ. «...Դպրոցին Հոգաբարձութիւնն իր վերայ առաւ լրագրոյս տնօրէնությունը և որուն խմբագրությունը յանձնեց Պ. Ա. Մուրատեանին, որոյ ուղիղ և ազատական սկզբունքը՝ ճշմարիտ ազգային ոգին և յառաջդիմութեան ունեցած սէրը յայտնի ստուգություններ են»<sup>12</sup>:

Իսկ հետեւող խմբագրականին մէջ յիշուած համեստ տրամադրությունը. «... ազգային լրագիր մը հիմնել հոս, որուն տնօրէնությունը մայրաքաղաքիս Դպրոցին Հոգաբարձութեանը յանձնելով՝ սա ևս անոր խմբագրությունը մեր

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 316:

<sup>10</sup> Չարդարեան Վահան: Եգիպտահայ Լրագրութեան Վաթսունամեակը 1865-1925, Աճեմեան Լ., Եգիպտահայ Տարեցոյց 1925, Ա. Տարի, Աղեքսանդրիա: 1924, էջ 74:

<sup>11</sup> Թովուզեան Յովհ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Եր., 1978, էջ 317:

<sup>12</sup> Տես Մանուկեան Յովսէփ: Յայտարարություն, Արմաւենի, Գահիրե, 1865, թ.1, էջ Ա:

նուաստութեան տուաւ. «–Մենք ալ միշտ փափաքելով ձեռքերնուս եկած ծառայութիւնն ազգերնուս մատուցանել՝ յանձն առինք այդ ծանր պաշտօնը, որ միշտ մեր կարողութենէն վեր եղած է ... »<sup>13</sup>:

Վաւերական է «Արմաւենի»-ի իւրաքանչիւր յաջորդական թիւերուն չորրորդ էջի երրորդ սիւնակին աւարտին նշուածը՝ « խմբագիր՝ Ա. Մուրատեան »:

Եւ վերջապէս, նշելի է Աբրահամ Մուրատեանի կողմէ ցոյց տրուած սկզբունքային յանձնարութիւնը՝ լրագրին բնոյթին եւ անոր հրատարակութեան պարբերականութեան մասին, թէ. «Մեր խմբագրութեանն յանձնուած այս թերթը պիտի պարունակէ Քաղաքական, Ազգային և Բանասիրական լուրեր, և իւրաքանչիւր ամսոյ 1 ին ու 16 ին պիտի հրատարակուի»<sup>14</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի հրատարակութեան **կնքահայրը** նկատուած է Գրիգոր Մարկոսեան (հիմնադիրներէն՝ Կ.Պոլսոյ «Նոյեան Աղաւնի» շաբաթաթերթին, 1852-1853), որուն նշումը կատարած է Վահան Զարդարեան երկու առիթներով. «Թերթին կնքահայրն եղած է Գրիգոր Մարկոսեան, որ Հնդկաստանի ժառանգական գործերով այն օրերուն Գահիրէ կը մնար»<sup>15</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **տպագրութիւնը** կատարուած է Աբրահամ Մուրատեանի ունեցած տառերով եւ Փարիզէն փոխադրած ձեռքի փոքր տպագրական մամուլով. «... Կիրթեմպերկի այս ուխտեալ աշակերտը կը փարի նորէն տպագրական կեանքին եւ Ֆրանսա թողուցած կազմածքը բերել տալով կ'սկսի հրատարակել «Արմաւենի» կիսամսեայ հանդէսը, 16 Մարտ 1865 ին»<sup>16</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **տարեկան զինին եւ բաժանորդագրութեան վայրերուն** մասին, անոր յաջորդական թիւերով եւ լրագրին 4-րդ էջի 3-րդ սիւնակի վերջաւորութեան տեղադրուած «Ծանուցումն» կը յայտնէ, թէ՛ «Տարեկան զիննէ բոլոր Եգիպտոսի համար 50 դուրուշ եգիպտական ողջ դրամ, իսկ Եգիպտոսէն դուրս 15 ֆրանք՝ ճանապարհի ծախսէ ազատ»:

Նաեւ՝ «Ստորագրութեան տեղերն են՝  
Գահիրէ՝ Հայոց Առաջնորդարանը  
Ալէքսանդրիա՝ Հայոց Եկեղեցին  
Կ. Պոլիս՝ «Կիլիկիա» լրագրոյն գրասենեակն, Զէնճիրլի խան վերնայարկ  
թիւ 3

Աֆիօն-Գարահիսար՝ Արապեան Մ. Յակոբ Աղային գրասենեակը  
Հետզհետէ այլ քաղաքաց ստորագրութեան տեղերն ալ պիտի ծանուցանեմք»<sup>17</sup>:

<sup>13</sup> Տես Մուրատեան Ա., Արմաւենի, Գահիրէ, 1865, թ.1, էջ Ա:  
<sup>14</sup> Նոյն տեղում:  
<sup>15</sup> Զարդարեան Վահան: Յիշատակարան 1512-1933: Հատոր Ա. Գահիրէ, 1933, էջ 5; Զարդարեան Վահան, Եգիպտահայ Լրագրութեան Վաթսուռամեակը 1865-1925; Աճեմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց, Ալէքսանդրիա, 1925, Ա. տարի, էջ 75:  
<sup>16</sup> Թեղիկ: Տիպ ու Տառ 412-1512-1912. Կ.Պոլիս, 1912, էջ 141-142:

Եզիպտահայ առաջին այս պարբերականը Աբրահամ Մուրատեանի «Փարիզ» լրագրին համեմատութեամբ թէւ նուազ տարածում ունէր, սակայն անոր խմբագիրը գոհունակութեամբ կու գայ շնորհակալական հետեւեալ խօսքով ողջունել ընթերցող հասարակութիւնը եւ ցուցաբերուած ընդունելութիւնը՝

«Ուրախութեամբ կտեսնենք, որ *Արմաւենին* սիրալիր ընդունելութիւն մը կգտնէ կոր եզիպտաբնակ Պատուելի Ազգայիններէն և անզգայ պիտի համարուինք, եթէ այս ընդունելութեան անտարբեր մնալով՝ շնորհակալութիւննիս չյայտնենք: Այս բանին մեզի գլխաւոր պատճառ տուողն է՝ Աղէք-սանդրիոյ Ազգայնոց լրագրոյս առաջին թիւը տեսած ատեննին իսկոյն փութալ և յիսուն բաժանորդաց ցանկ մը՝ տարեկան գնոյն կանխիկ վճարմամբ ի միասին՝ յԱռաջնորդարանս ուղարկելնին: Ասանկ ջերմեռանդ ազգասիրութեան և ուսումնասիրութեան փորձեր քիչ տեսնուած ըլլալով՝ ասիկայ արդարեւ մեծ պատիւ կընէ նոյն քաղաքի մեր սիրելի Համազգեացը և յոյս կու տայ մեզի մեր ազգին յառաջադիմութեանը վրայ»<sup>18</sup>:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **էջերուն թիւին եւ չափին** մասին մատենագիր Գարեգին Լեւոնեան կը նշէ 16 էջ եւ 31 X 47 սմ. չափերով<sup>19</sup>: Վաւերական է սակայն լրագրին միայն չորսական էջերով կազմը, 31 X 47 սմ. չափերով:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **աշխատակից-թղթակիցներուն** մասին Հայր Մկրտիչ Պօտուրեան հետեւեալը կը նշէ՝ քաղուած իր տեսած լրագրին միայն առաջին երկու թիւերէն (թիւ 1 եւ 2).

«Արմաւենի»-ի յօդուածագիրներն էին, բացի խմբագրէն՝ *Մկրտիչ եպիսկոպոս* Միաբան սրբոյ Երուսաղէմի, որ աւելի խրատական մասը ստանձնած էր, Յովսէփ Մանուկեան՝ դպրոցական խնդիրներով զբաղող, Ս. Ս. Յ. Ներշապուհ՝ գրական յօդուածները կը ստորագրէ, ունի ոտանաւոր հանելուկներ և հետեւողութեամբ գրուած առակներ: Կ՝երեւնան Ռ. Ռ. թղթակից մը և Ս. Մ. (Աղա Սիմէօն Մուրատեան), վերջինս «Բանասիրական» խորագրով գրաբար յօդուածով հայկական լրագրութեան նիւթ կը մատակարարէ: Արմաւենիի խմբագիրը Ազգային և Քաղաքական լուրեր հաղորդելէ զատ *Այլ և այլք* խորագրին ներքեւ իր ընթերցողաց կու տայ համազգային մանր լուրեր»<sup>20</sup>:

<sup>17</sup> Ծանուցում, Արմաւենի, Գահիրէ, 1865, թիւ 2, 3 եւ 4, էջ 4:

<sup>18</sup> Արմաւենի, առաջին տարի, Գահիրէ, 1865, թիւ 3, էջ 2:

<sup>19</sup> Լեւոնեան Գարեգին: Հայ Պարբերական Մամուլը (լիակատար ցուցակ): 1794-1934.- Երեւան, 1934, էջ 16:

<sup>20</sup> Պոտուրեան Հ. Մ., Եզիպտահայ Լրագրութեան Քառասնամեայ Պատմութիւնը: 1865-1905, Բազմավէպ, Վենետիկ, 1907, թիւ 2, էջ 74:



Այստեղ կարելի է աւելցնել նաեւ Բանասիրական խորագրով Դաւիթ Յակոբեանի յօդուածները եւ Յարութիւն Միքայէլեանի թերթին խմբագրին յղած գրութիւնը «Արմաւենի»-ի 3 եւ 4 համարներուն 4-րդ էջերով:

«ԱՐՄԱԻՇԵՆԻ»-ի **հրատարակութեան դադարելուն** մասին կարգ մը պատճառներ ներկայացուած են, որոնք կը վերագրուին Աբրահամ Մուրատեանի առողջական պայմաններուն, Եգիպտոսի մէջ հնդախտի (քուլերա) համաճարա կին տարածման, ինչպէս նաեւ համայնքային կեանքէն ներս տիրող “Չոգաբարձութիւն եւ Առաջնորդական Փոխանորդ” փոխադարձ անհանդուրժողական իրադարձութիւններուն: «ԱՐՄԱԻՇԵՆԻ»-ն քանի մը ամիս միայն կեանք ունեցաւ, նախ անոր համար որ Աբրահամ Մուրատեան Եգիպտոսի կլիմայէն չօգտուեցաւ եւ մեկնեցաւ, եւ յետոյ Եգիպտոսի հազիւ 200 տուն հայերը չէին կրնար թերթ մը ապրեցնել»<sup>21</sup>:

Կը նշուի, թէ հնդախտի համաճարակին պատճառով Մուրատեան լրագիրը դադարեցնելով՝ մեկնած է Եգիպտոսէն. «Որպէս լրագրի դադարելու պատճառ առաջ քաշուած փաստարկները (խուլերայի համաճարակ, խմբագրի հիւծախտ եւ այլն) հազիւ թէ համապատասխանեն իրականութեան»:

«...Եթէ իրոք, Եգիպտոսի կլիման բացասաբար անդրադառնար Մուրատեանի առողջական վիճակի վրայ, ապա նա Տրիեստն եւ Կ.Պոլիս կատարած կարճատեւ ուղեւորութիւնից յետոյ չէր գնայ Եգիպտոս»:

«Արմաւենի» լրագրի հրատարակութեան դադարելու պատճառը պէտք է փնտրել հակաքէֆսիզեան այն ելոյթների մէջ, որ 1865թ. մարտ-ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցան Կահիրէում: Քէֆսիզեանը ստիպուեց հեռանալ Եգիպտոսից: Իհարկէ, այդ պայմաններում նրա շահերի պաշտպանութիւնը ստանձնած լրագիրը չէր կարող այլեւս շարունակել իր գոյութիւնը»<sup>22</sup>:

Միւս կողմէ Աբրահամ Մուրատեան գիրքեր, «Փարիզ» լրագրէն համարներ եւ գոյք վաճառելու «Ծանուցումներ» կը կատարէ «Արմաւենի»-ի թիւ 4 վերջին համարով. «Մեր գրքերուն մէկ մասը վաճառելու մտադիր ըլլալով կիմացընեմք մայրաքաղաքիս ընթերցասէր Ազգայնոց, որ եթէ անոնցմէ գնել ուզեն, կրնան մինչեւ ամսոյս 20ը ամեն օր երեկոյեան ըստ տաճկաց ժամը 10էն յետոյ մեր գրասենեակն հրամայել եւ նայիլ ու իրենց պէտք եղածը գնել»:

«Նաեւ «Փարիզ» լրագրէս ալ սակաւաթիւ օրինակներ կգտնուին քովերնիս, որոնք կէս գինով կվաճառեմք: Պատկերներ ու գրասեղան մըն ալ ունիմք ծախու»<sup>23</sup>:

<sup>21</sup> Ալլպոյաճեան Արշակ, ԱՄՆ-ի Եգիպտոսի Նահանգը եւ Հայերը, Գահիրէ, 1960, էջ 295:

<sup>22</sup> Թովուզեան Յովհ. Խ., Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն, Երեւան, 1978, էջ 318:

<sup>23</sup> Ծանուցում, Արմաւենի, Գահիրէ, 1865, թիւ 4, էջ 4:

Եզիպտահայ մամուլի առաջին հրատարակութեան «ԱՐՄԱԻԵՆԻ»-ի 150-ամեակին առթիւ եւ անոր մասին կատարուած ուսումնասիրութիւններուն շուրջ կարելիութեան սահմաններով մատուցուած ներկայ համադրուած աշխատանքը կ'ամբողջանայ՝ իր ժամանակի մտաւորական տարրին, հասարակական գործիչներու, հոգեւորական դասին եւ համայնքային կեանքի իրադարձութիւններուն մասնակից անձերու լրագրին հրատարակութեան մէջ ունեցած դերակատարութեան մասին ամփոփ տեղեկութիւններու ներկայացումով: Սոյն առաջադրանքը կատարելի է յառաջիկային:

**SOUREN BAYRAMYAN**

**150 ANNIVERSARY OF THE FIRST ARMENIAN NEWSPAPER IN  
EGYPT – “ARMAVENI”**

**SUMMARY**

History of establishment of the first Armenian periodical in Egypt “Armaveni” is described. Being established in 1865 in Cairo, only 4 issues of the newspaper were published. The reasons of the short life of the newspaper are provided.